

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գ. Ս. ԶԵՆՑՍ

Հետխորհրդային տարածաշրջանի երկրներում քաղաքական կուսակցությունների կազմավորման ու զարգացման (պարտոզենեզի) գործընթացը ներկայումս գտնվում է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, որովհետև այն հարուստ նյութ է տրամադրում պարտոլոգիական հետազոտությունների համար: Նրանցում առաջադրված հանգուցային խնդիրների մեջ կարևորվում է հատկապես կուսակցական դաշտի ձևավորման վրա ներազդող սոցիալական, տնտեսական, ազգային-կրոնական, ներքաղաքական ու արտաքին քաղաքական գործոնների բացահայտումն անցումային հասարակություններին բնորոշ պարտոզենեզի ընթացքը լուսաբանելու առումով: Վերջինս գերակայող է Անդրկովկասի երեք պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններում:

Պատճառը տարածաշրջանում գոյություն ունեցող սուր հակամարտություններն են (վրաց-աբխազական, վրաց-օսական, դարաբաղյան), որոնք արդեն միջազգայնացվել են, բայց դեռ վերջնականորեն լուծված չեն և շարունակում են ավելոծել քաղաքական դաշտը՝ շարունակ մնալով որպես ներքաղաքական պայքարի թիվ մեկ հիմնախնդիրը: Եվ պատահական չէ, որ այդ հիմնախնդրի շուրջ կուսակցական խմբավորումների բախումները դարձել են իշխանափոխությունների հիմնական պատճառ թե՛ Վրաստանում, երբ Գամսախուրդիային փոխարինեց Շևարճաձեն, թե՛ Ադրբեջանում, երբ Էլչիբեյին տապալեց Հեյդար Ալիևը և թե՛ Հայաստանում, երբ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո իշխանության եկավ Ռոբերտ Քոչարյանը: Այս առումով պարտոզենեզի գործընթացի վրա արտաքին քաղաքական գործոնների ազդեցության և արտաքին քաղաքականության մշակման գործում քաղաքական կուսակցությունների մասնակցության հետազոտությունը խիստ արդիական է ու հրատապ:

Նախապես ասենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքի բևեռացման հիմնական պատճառը եղել և մնում է դարաբաղյան հակամարտությունը: Իշխող Կոմունիստական կուսակցության և ընդդիմադիր քաղաքական ուժերի ջրբաժանը վերաբերմունքն էր դարաբաղյան շարժման նկատմամբ: Շարժումը ղեկավարող «Ղարաբաղ» կոմիտեների միավորմամբ 1989 թ. կազմավորվեց Հայոց համազգային շարժումը, որը կարողացավ տապալել կոմունիստական վարչակարգը և 1990 թ. վերցնել իշխանությունը¹: Հետագա տասը տարիներին այս հիմնախնդրի լուծման ուղիների և նրա հետ կապված արտաքին քաղաքական կողմնորոշումների շուրջ ընթացող քաղաքական պայքարն ուղղորդում էր հանրապետության ներքաղաքական իրադարձությունների ընթացքը: Այս հանգամանքը զգալիորեն բարձրացրել է արտաքին քաղաքական հարցերի քննարկումներին կուսակցությունների մասնակցության աստիճանը:

¹ St'is G. Kerjan, Утверждение многопартийности в Армении, "Центральная Азия и Кавказ", № 4 (16), 2001, էջ 118-126:

Անկախ պետականության անբողջ ընթացքում Հայաստանի կուսակցությունները վերը նշված պատճառներով առանձնակի հետաքրքրություն են ցուցաբերել արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործընթացի նկատմամբ: Հստակորեն երևում է արտաքին քաղաքական մեխանիզմի առաջատար օղակների գործունեության բովանդակության, բնականաբար նաև ներպետական և արտաքին մարմինների գործառույթների վրա կուսակցական գործոնի ուժեղ ազդեցությունը:

Հանրապետության քաղաքական կուսակցությունների ճնշող մասի ծրագրային ու նախընտրական փաստաթղթերը, որոնք հաստատվել են կուսակցական բարձրագույն համաժողովներում, ունեն արտաքին քաղաքական բաժիններ: Դրանցում նախանշված են արտաքին քաղաքականության ընդհանուր ուղղությունները, հաճախ նաև դրանց իրականացման միջոցները: Կուսակցությունների ղեկավար մարմինների որոշումներում, կուսակցական առաջնորդների հայտարարություններում անընդհատ նշվում է, որ իշխանության գալուց հետո կառավարության գործունեության հիմքում կդրվեն այդ դրույթները: Հայաստանում փորձում են ընդօրինակել զարգացած ժողովրդավարական երկրներում ընդունված պրակտիկան, որտեղ կուսակցական փաստաթղթերում ձևակերպված արտաքին քաղաքական հիմնադրույթները ելակետային են կառավարության գործունեության համար, եթե, իհարկե, կուսակցությունը հաղթում է ընտրություններում և կազմում կառավարություն:

Կուսակցությունների ակտիվ և բազմապիսի ազդեցությունն արտաքին քաղաքական մեխանիզմի վրա դրսևորվում է հատկապես արտաքին քաղաքականությունն իրականացնող մարմիններում կադրային տեղաշարժերով: Առաջինը կառավարությունն է, որը Հայաստանում միշտ կազմվել է կուսակցական հիմքի վրա: Այստեղ միշտ ընդգրկվել են հաղթած կուսակցության ղեկավարները, ուստի անկուսակցական-այրօթեսիտներ գրեթե չեն հանդիպում: Ազդեցությունը չի սահմանափակվում միայն ընդհանուր քաղաքական ղեկավարությամբ: Կառավարության ազդեցիկ պաշտոնները, որոնց մեջ առաջնայիններից է արտաքին գործերի նախարարի պաշտոնը, խիստ կուսակցականացված են: Արտաքին գործերի բոլոր նախարարները միշտ եղել են իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչներ: Բացի այդ՝ արտաքին քաղաքական մեխանիզմի մասնագիտացված մարմինները նույնպես կուսակցականացված են: Այդ են վկայում դեսպանների, հյուպատոսների և այլ պաշտոնյաների փոփոխություններն ու տեղաշարժերը հատկապես 1998 թ. իշխանավոխությունից հետո:

Կուսակցություններից հատկապես պառլամենտական խմբակցություններն ունեցողները փորձում են ազդել նաև Ազգային ժողովի արտաքին քաղաքական գործունեության վրա: Հատուկ նշանակություն ունի այս դեպքում արտաքին հարաբերությունների հանձնաժողովը, որը մշակում է պառլամենտ մտնող արտաքին քաղաքական փաստաթղթերը, կարևոր միջազգային պայմանագրերն ու համաձայնագրերը: Ուստի պառլամենտական ներկայացուցչություն ունեցող կուսակցություններից յուրաքանչյուրը ձգտում է, որքան հնարավոր է, շատ անդամ ունենալ այնտեղ:

Հատկանշական է, որ կառավարող կուսակցությունները միշտ իրենց ձեռքում են պահել հանձնաժողովի նախագահի ընտրության և գործունեության վերահսկողությունը: Այս հանգամանքը նվազեցրել է հանրապետության Ազգային ժողովում արտաքին քաղաքականության որևէ հարցի քննարկմանը ընդդիմության մասնակցության հնարավորությունները: Այդ է պատճառը, որ ընդդիմադիր կուսակցությունները ստիպված են եղել ճնշումն իրականացնել մեծ մասամբ դրսից:

Կազմակերպվել են զանգվածային բազմաթիվ միջոցառումներ, որոնց ընթացքում քննարկման է դրվել կառավարության արտաքին քաղաքականությունը, հաստիակապես այն դեպքերում, երբ թվացել է, թե ինչ-ինչ ոչ ձեռնտու տարբերակներով լուծվում է Ղարաբաղի հարցը:

Միաժամանակ պետք է նշել, որ քաղաքական կուսակցությունների ծրագրային փաստաթղթերի արտաքին քաղաքական դրույթներն ավելի շուտ ընտրազանգվածի վրա գաղափարական ազդեցության և վարկանիշի բարձրացման նպատակ են հետապնդում: Եվ բնավ պատահական չէ, որ այդ կուսակցություններից և ոչ մեկը չունի արտաքին քաղաքականության հիմնախնդիրների լուծման քիչ թե շատ հիմնավորված առաջարկություն: Այդ են վկայում ինչպես 1990-2003 թթ. ՀՀ Ազգային ժողովում ներկայացուցչություն ունեցած և գործադիր իշխանություններին մասնակցած, այնպես էլ արտախորհրդարանական քաղաքական ուժերը կուսակցությունների արտաքին քաղաքական դրույթները:

Այդ տեսակետից խիստ հատկանշական է ՀՀԸ-ի օրինակը: Ձևավորվելով դառաբաղյան շարժման ավիքների վրա՝ այն սկզբում ղեկավարում էր կոմունիստական վարչակարգին ընդդիմադիր բոլոր քաղաքական ուժերին, այնուհետև, ութ տարի գտնվելով իշխանության ղեկի մոտ, ինքն էր պայքարում ընդդիմադիր կուսակցությունների դեմ, իսկ 1998թ. գրկվելով իշխանությունից ու հայտնվելով ընդդիմության մեջ՝ ստիպված էր նորից վերագնահատելու իր անցած ուղին: Նշված երեք շրջաններից առաջինում ՀՀԸ-ի արտաքին քաղաքական դրույթներն աչքի էին ընկնում իրենց արմատականությամբ և հակակոմունիստական ուղղվածությամբ: Այս փուլում նկատվում էին նույնիսկ արկածախնդրական առանձին երանգներ, որովհետև դեռ հստակ չէր գիտակցվում հնարավորն ու անհնարինը արտաքին քաղաքական նպատակների իրականացման գործում: Ըստ այդմ՝ 1989թ. ծրագրի գաղափարական սկզբունքների 5-րդ կետում ասվում է. «Հայ ժողովուրդն իր ազգային ծրագրերն իրագործելիս պետք է ապավինի իր ուժերին, հույս չդնելով ուրիշի հովանավորության վրա: Մրան հակառակ ամեն մի տեսակետ ժխտվում է պատմական փորձով և ակամա ծառայում է մեր ժողովրդին հոգևոր ստորկության մեջ պահելուն: Քաղաքական մոլորություն է մահ այն մտայնությունը, ըստ որի ազգն ունի մշտական բարեկամ և մշտական թշնամի և ոչ թե մշտական ազգային շահեր»²:

ՀՀԸ-ն մերժում է անբարոյական և մեր ազգի համար անպտուղ այն քաղաքականությունը, որը մի կողմից իբրև «դիվանագիտություն» ենթադրում է հավատարմության անտեղի հավաստիացումներ այլ ժողովրդի նկատմամբ, մյուս կողմից՝ պահանջում է թշնամություն քարոզել ուրիշ ժողովուրդների կամ կրոնների դեմ՝ գտնելով, որ ժողովուրդների փոխհարաբերություններում ազգային և պետական շահերը ավելի մեծ դեր են խաղում, քան կրոնական և ծագումնաբանական ընդհանրությունները³: Այս տեսակետները, ըստ էության, փորձում են վերագնահատել հայերի արտաքին քաղաքական կողմնորոշումը, որն ավանդաբար եղել է ռուսամետ և հակաթուրքական: Ղարաբաղի հայերի ազատագրական շարժման նկատմամբ Մոսկվայի կոմունիստական վարչակարգի բացասական վերաբերմունքը ծնել էր այն մտայնությունը, որ բարեկամ Ռուսատանը և թշնամի Թուրքիան տեղերը փոխել են: Ենթատեքստից բխում է մահ այն, որ թուրքերի նկատմամբ թշնամություն քարոզելը կործանարար է և չի համապատասխանում ազգային պետական շահերին: Կուսակցության նպատակների և մոտակա

² «Հայոց համազգային շարժում: Ծրագիր կանոնադրություն», Եր., 1989, էջ 4:

³ Տե՛ս նույն տեղը:

խնդիրների շարքում նշվում է «Արցախի վերամիավորումը ՀԽՍՀ-ի հետ», «Պիվա-նագիտական հարաբերությունների հաստատման իրավունքի իրագործումը և անդամակցությունը միջազգային կազմակերպություններին», «հասնել 1915-1922 թթ. Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայերի ցեղասպանության փաստի ճանաչմանը ՄԱԿ-ի կողմից», «հասնել Հայաստանից զավթած տարածքների նկատմամբ հայ ժողովրդի պատմական և օրինական իրավունքի միջազգային ճանաչմանը», «պաշտպանել, որպեսզի ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ապօրինի ճանաչի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի Հայաստանին վերաբե-րող հոդվածները և Կոպկասյան բյուրոյի նույն թվականի հուլիսի 5-ի որոշումը»⁴: Այստեղ երևում է այն հակասականությունը, որ ծնվում է առաջադրված սկզբունք-ների և նպատակների բախումից, որովհետև մի կողմից խնդիր է դրվում արմա-տականորեն փոխել վերաբերմունքը հարևան Թուրքիայի նկատմամբ, մյուս կող-մից բարձրացվում են Թուրքիայում իրականացված հայերի ցեղասպանության ճա-նաչման, սահմանների վերանայման և Ղարաբաղի միավորման հարցերը, որոնք բոլորն էլ ուղղված են Թուրքիայի դեմ: Կարճ ժամանակ անց, հավանաբար, այս հակասականությունը գիտակցվեց, և 1990 թ. «Ծրագիր կանոնադրության» մեջ արդեն բացակայում են մշտական բարեկամների ու թշնամիների մասին դատո-րությունները, ցեղասպանության ճանաչման և սահմանների վերանայման մասին հարցադրումները⁵: 1993 թ. ծրագրի արտաքին քաղաքական դրույթները որակա-պես տարբերվում են նախորդներից: Նրանք առավել հասուն են և հիմնավորվում են համաշխարհային իրողությունների լույսի ներքո: Նրանցում առաջադրվում է «տարածաշրջանային անվտանգության», «ռազմաքաղաքական ապահովու-թյան», անմիջական հարևանների հետ «քննականոն հարաբերությունների հաս-տատման» և «կոլեկտիվ անվտանգության ապահովման համար ռազմավարա-կան, ռազմաքաղաքական դաշինքներին Հայաստանի մասնակցության» խնդիր-ները⁶: Ցեղասպանության ճանաչման և հայկական տարածքների վերաբերյալ պահանջները փոխարինված են անվտանգության երաշխիքների ստեղծման անհրաժեշտության մասին հարցադրումներով: 1996 թ. նախագահական ընտրու-թյուններում ՀՀԿ կուսակցության կողմից առաջադրված Լևոն Տեր-Պետրոսյանի ընտրական ծրագրի արտաքին քաղաքական դրույթները մեծ մասամբ համապա-տասխանում էին կուսակցության ծրագրին: ՀՀԿ փաստացի առաջնորդը և գոր-ծող նախագահը խոստանում էր ընտրողներին «պահպանել և խորացնել Հայաս-տանի հավասարակշռված արտաքին քաղաքականությունը», «ամրապնդել բա-րիտրացիական հարաբերությունները Ռուսաստանի, Վրաստանի և Իրանի հետ», «շարունակել կառուցողական ջանքերի գործադրումը Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ», նպաստել ԱՊՀ-ին, Սևծովյան տնտեսական համագործակցությանը, Առևտրի համաշխարհային կազմակերպությանը և եվրոպական կառույցներին ինտեգրմանը: Ղարաբաղի հարցի լուծման համար նա պարտավորվում էր շարունակել բանակցությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում⁷:

2000 թ. դեկտեմբերին կայացած ՀՀԿ XII համագումարը կուսակցության ծրագիրը ենթարկեց նոր խմբագրման: Արտաքին քաղաքական դրույթները էա-պես չփոխվեցին, բայց համագումարի ընդունած բանաձևը բավականին սուր

⁴ Նույն տեղում, էջ 6, 8:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 4-6:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 4:

⁷ Տե՛ս «Լ. Տեր-Պետրոսյանի 1996թ. ընտրական ծրագիրը», էջ 12-13:

քննադատում է նոր իշխանությունների արտաքին քաղաքականությունը: Այն-տեղ շեշտվում էր, որ վայրիվերո դրսևորումներ է ստացել արտաքին քաղաքականությունը: Հայաստանը դուրս է մղվում միջազգային և տարածաշրջանային ինտեգրացման գործընթացներից և ծրագրերից: Սահմանակից չորս հարևան երկրներից երկուսի հետ եղած հակասություններն ու խնդիրները կարգավորվելու փոխարեն հարաբերությունները զարգանում են ճիշտ հակառակ՝ անվերադարձ թշնամականի վերածվելու ճանապարհով: Վտանգված են մյուս երկուսի հետ հաստատված բարիդրացիական հարաբերությունները: Ցեղասպանության խընդրի տեսքով «Հայկական հարցը», ինչպես հարյուր տարի առաջ, կրկին դարձել է մեծ տերությունների ձեռքին խաղալիք՝ սեփական շահերը հետապնդելու խաղաթուղթ՝ մեզ թողնելով դրա հնարավոր անկանխատեսելի հետևանքները: Ղարաբաղյան հակամարտության հարցը ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի ու լորտից, ըստ էության, տեղափոխվել է պահանջատիրության հարթություն, ինչի հետևանքով Ղարաբաղը դադարել է հակամարտության կողմ լինելուց և վերածվել հակամարտության խնդրի: Այս տարիներին հայկական դիվանագիտության կողմից հրապարակ նետված «ժողիզոնական կապեր», «դե ֆակտո անկախ, դե յուրե ոչ Ադրբեջանի կազմում», «ընդհանուր պետություն», «այ կոմվենցիոնալ լուծում», «մի՛ հարցրու, մի՛ ասա», անհասկանալիից մինչև տարօրինակ բառակապակցությունները, Քոչարյան-Ալիև որքան հաճախադեպ, նույնքան անպտուղ հանդիպումներն ընդամենը շղարշ են՝ ծածկելու համար վարչախմբի իրական՝ հակամարտության հարցի վերջնական լուծումը սառեցնելու անհեռանկար և վտանգավոր ռազմավարությունը: Բանակցություններն իրականում մտցվել են փակուղի, այն դեպքում, երբ Ադրբեջանն օրըստօրե տնտեսական և քաղաքական առավելություններ է ստանում հայկական կողմի նկատմամբ⁸:

2003 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ կուսակցության քաղաքական դրույթները նորից ընդգծում էին արտաքին քաղաքականության մեջ «երրորդ ուժին» ապավինելու, պետության և քաղաքացիների շահերին հակասող կեղծ ազգային նպատակներ դնելու անթույլատրելիությունը: Գերագույն խնդիրը կայուն խաղաղության պահպանումն է, տարածաշրջանային և անվտանգության այլ համակարգերին ակտիվ մասնակցությունը⁹: ՀՀԸ-ն ազդարարում էր, որ սկսած 1988 թ.՝ կուսակցությունը միշտ ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը կապել է ազգերի ինքնորոշման իրավունքի հետ, և ՀՀ իշխանությունների գործունեությունը համարվում է մարտավարական սխալ, որովհետև այն փաստորեն հիմնախնդիրը տեղափոխել է տարածքային պահանջների հարթություն: Անհրաժեշտ է համարվում բանակցություններին մասնակից դարձնել Լեռնային Ղարաբաղին, և առավել ընդունելի տարբերակ է դիտվում փուլային տարբերակը¹⁰:

Հայաստանի քաղաքական դաշտում առանձնանում են մի քանի ձախ թեքման կուսակցություններ, որոնց համար ռուսական կողմնորոշումը քննարկման ենթակա չէ, իսկ Ռուսաստանի հետ նոր միության ստեղծումն անվտանգության միակ երաշխիքն է համարվում: Այս տեսակետից բնութագրական է Հայաստանի Կոմունիստական կուսակցության օրինակը, որն ուներ իր կայուն ընտրազանգվածը, հաստատուն տեղը քաղաքական դաշտում և մինչև վերջին, 2003 թ.

⁸ Տե՛ս «Շողովածու ՀՀԸ XII համագումարի պատվիրակների համար», Եր., 2000, դեկտեմբեր, էջ 43:

⁹ Տե՛ս «Парламентские выборы. Армения 2003. Программы партий, выдвигающих кандидатов в парламент». Եր., 2003, էջ 66:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 67:

ընտրությունները մշտապես պահպանում էր իր ներկայացուցչությունը Ազգային ժողովում: Կուսակցության արտաքին քաղաքական դրույթներն ունեն շեշտադրված միակողմանիություն և մեծ մասամբ նպատակաուղղված են Հայաստան-Ռուսաստան մերձեցմանը՝ որպես արտաքին հարաբերությունների առաջնային խնդիր: ՀԿԿ-ն նպատակ է հռչակում «Ռուսաստանի հետ դարավոր ավանդույթներ ունեցող բարեկամական, տնտեսական և ռազմաքաղաքական կապերի ամրապնդումը, որոնց շնորհիվ ձեռք բերվեց հարյուրամյակներ առաջ կորսված հայ ժողովրդի պետականությունը, և ստեղծվեց ու զարգացավ ծաղկուն ու բարձր քաղաքակրթության մի երկիր՝ Խորհրդային Հայաստանը»¹¹: Ռուսաստանի հետ մերձեցումը համարվում է նախապայման մյուս ռազմավարական խնդիրը լուծելու ճանապարհին, որը կուսակցության համար հետխորհրդային տարածաշրջանում անկախ պետությունների մոտ միության, այսինքն՝ նորացված ԽՍՀՄ-ի ստեղծումն է: Ազգային կեցվածքը և դիմագիծը չկորցնելու համար կոմունիստները նույնպես առաջադրում են ցեղասպանության ճանաչման և դարաբաղի հարցի արդարացի լուծման պահանջները: Ի դեպ, դարաբաղյան հակամարտության լուծման գործնական առաջարկներ ՀԿԿ-ն չունի, սակայն առավել խորխտ կեցվածք է ընդունում՝ պահանջելով կառավարությունից ճանաչել Լեոնային Ղարաբաղի հանրապետությունը, և այդ պահանջը դարձնում է ծրագրային դրույթ: 2003 թ. ընտրություններին կոմունիստները մասնակցեցին պառակտված: Մի խումբ կոմունիստ գործիչներ հիմնադրեցին Հայաստանի նորացված կոմունիստական կուսակցությունը: Վերջինիս արտաքին-քաղաքական ծրագրային դրույթներում կրկին առաջադրվում է Ռուսաստանի հետ կապերի ամրապնդման և Ռուսաստան-Բելառուս միության մեջ մտնելու անհրաժեշտությունը: Ղարաբաղյան խնդրի լուծումը հնարավոր էր համարվում քաղաքական, դիվանագիտական և միջազգային հարաբերությունների համակարգում¹²:

Հայաստանի աջակողմյան մի քանի կուսակցություններ Ռուսաստանի հետ սերտ հարաբերությունների պահպանումը չեն համարում միակ արտաքին քաղաքական նպատակը և կարևորում են նաև մյուս ուղղությունները: Նշենք դրանցից Ազգային-ժողովրդավարական միությունը, որը բավականին երկար ժամանակ կայուն քաղաքական կշիռ ուներ: Այն հիմնվել է 1991թ. ՀՀԸ-ից հեռացած գործիչների կողմից: Կուսակցությունը հաղթահարել է հինգ տոկոսի բնագիծը 1995 և 1999 թթ. ընտրություններում, իսկ ԱԺՄ առաջնորդ Վ. Մանուկյանը 1996 և 1998 թթ. նախագահական ընտրություններին մասնակցելով, բարձր ցուցանիշներ ձեռք բերեց: 2003 թ. սկսած՝ խորհրդարանում ներկայացված է ընդդիմադիր «Արդարություն» դաշինքի կազմում: ԱԺՄ-ի արտաքին քաղաքական դրույթները նույնպես զուրկ են գործնականությունից և կրում են դեկլարատիվ բնույթ:

1995 թ. նախընտրական ծրագրի 4-րդ կետով արտաքին հարաբերությունների բնագավառում կուսակցության նպատակը համարվում է «սերտ համագործակցությունը հատկապես Ռուսաստանի և ԱՊՀ մյուս պետությունների հետ, բազմաբնույթ հարաբերություններն արևելքի մեր հարևանների, հատկապես Իրանի հետ, հավասարակշռված հարաբերությունները արևմուտքի երկրների հետ»¹³: Վ. Մանուկյանի 1996 և 1998 թթ. նախընտրական ծրագրերը պարունակում են միայն մեկ դրույթ. «Քաղաքական բանակցությունների միջոցով հասնել Ղարաբաղի

¹¹ «ՀԿԿ ծրագիր», «Մեր խոսքը» թերթ, նոյեմբեր, 1994, թիվ 16 (56):

¹² Տե՛ս «Парламентские выборы. Армения 2003», էջ 64:

¹³ «ԱԺՄ 1995 թ. նախընտրական ծրագրի հիմնադրույթներ», էջ 6:

անկախ կարգավիճակի ճանաչմանը՝ կանխելով ռազմական գործողությունների վերակսման հնարավոր փորձերը»¹⁴:

Հայաստանի Հանրապետության երրորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված աջակողմյան մյուս ուժերի (Հանրապետական, Ժողովրդական, «Օրինաց երկիր» կուսակցություններ, «Իրավունք և միաբանություն» խմբակցություն) և մի քանի այլ արտախորհրդարանական կուսակցությունների (Հայաստանի ռամկավար-ազատական կուսակցություն, Ազգային ինքնորոշում միավորում, «Ժողովրդավարական հայրենիք», «Արժանապատիվ ապագա» և այլն) ծրագրային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արտաքին քաղաքական դրույթները մեծ մասամբ կրկնում են միմյանց: Որպես կանոն՝ բոլորն էլ շեշտը դնում են միջազգային կազմակերպություններին անդամակցության, Վրաստանի, Իրանի և հատկապես Ռուսաստանի հետ համագործակցության զարգացման, արտաքին հարաբերություններում հայկական սփյուռքի և համահայկական կառույցների դերի բարձրացման, Եվրոպայի հետ ինտեգրացման վրա: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար առաջարկվում են նույնաման տարբերակներ, որոնք հիմնականում հանգում են հետևյալ հանգուցալուծումներին.

- հասնել Ղարաբաղի անկախության միջազգային ճանաչման,
- Ղարաբաղը միավորել Հայաստանին,
- պահպանել ձեռք բերված «ստատուս քվո» և որքան հնարավոր է Ղարաբաղի խնդրի չկարգավորված վիճակը:

Քիչ չեն մասնա կուսակցությունները, որոնք սահմանափակվում են խաղաղության ամրապնդման պայմաններում արցախյան հիմնախնդրի արդարացի լուծման մասին ղեկավարատիվ հայտարարություններով, իսկ թե ո՞րն է այդ «արդարացի լուծումը», մնում է չպարզաբանված:

Հարկ ենք համարում առանձնակի անդրադառնալ այն քաղաքական կուսակցություններին, որոնց համար արտաքին քաղաքականության մեջ առաջնահերթ նպատակը Հայ դատն է և ցեղասպանության ճանաչումը: Առաջատարը այստեղ Հայ հեղափոխական դաշակցությունն է: Ընչու է, կուսակցությունը ունի բավականին փոքր խորհրդարանական խմբակցություն, բայց 1998 թ. արտահերթ նախագահական ընտրություններում գործում աջակցություն ցույց տվեց ներկայիս գործող նախագահ Ռ. Քոչարյանին, որի շնորհիվ հասավ բավականին լուրջ ազդեցության գործադիր իշխանության մարմիններում և բնականաբար մասնա արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործում: 2003թ. ընտրություններից հետո Դաշակցությունը կառավարող կոալիցիայի մաս է կազմում և շարունակում է պահպանել իր տեղը գործադիր իշխանության մեջ:

ՀՀ արտաքին քաղաքականությունը, ըստ Դաշակցության ծրագրային դրույթների, պետք է կառուցվի բազմաբևեռայնության և հավասարակշռելիության սկզբունքով՝ միաժամանակ հատուկ կարևորելով փոխհարաբերությունները Ռուսաստանի, Ռուսաստան-Իրան առանցքի երկրների և հակաթուրք ուժերի հետ: 1999 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ Դաշակցության առաջադրած նախընտրական ծրագրում առկա են հետևյալ դրույթները.

«...Հայ դատն ու Արցախի խնդիրը, որպես նրա բաղկացուցիչ մաս, էական տեղ պետք է ունենան ՀՀ արտաքին քաղաքականության մեջ»,

«...Թուրքիա-Հայաստան փոխհարաբերությունների հաստատումը հնարավոր է, եթե Թուրքիան ճանաչի հայոց ցեղասպանությունը և անկողմնակալ դիրք գրավի Արցախյան հիմնահարցի խնդրում»¹⁵:

¹⁴ Վ. Մանուկյանի 1996 թ. (էջ 2) և 1998թ. նախընտրական ծրագրերը (էջ 3):

¹⁵ «ՀՅԴ նախընտրական ծրագիր (1999 թ.)», էջ 32:

Պարզ երևում է, որ Դաշնակցությունը Հայ դատը ցանկանում է դնել Հայաստանի արտաքին քաղաքականության հիմքում: Դերանով է պայմանավորված հայերի 1915 թ. ցեղասպանության ճանաչման ուղղությամբ հանրապետության իշխանությունների ակտիվ քաղաքականությունը 1998 թ. իշխանափոխությունից հետո: Դժվար է ասել, թե որքանով է հիմնավորված դարաբաղյան հակամարտությունը շաղկապել Հայ դատի հետ, որը, ցեղասպանության ճանաչումից բացի, տարածքային, մյուսական և բարոյական կորուստների փոխհատուցման ուղղակի պահանջատիրություն է Թուրքիայից, որն առանց այդ էլ տարածաշրջանում հակահայկական քաղաքականություն է վարում: 2003 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ կուսակցության արտաքին քաղաքական ծրագրային դրույթները նախատեսում են փոխլրացման քաղաքականության շարունակություն՝ եվրոպական ինտեգրացիայի առաջնայնությամբ և հայոց ցեղասպանության ճանաչման կարևորության պահպանմամբ: Դարաբաղյան հիմնախնդրի լուծման գործընթացում որպես բանակցությունների նպատակ է առաջադրվում ԼՂՀ փաստական և իրավական անկախության ճանաչումը¹⁶:

Կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների արտաքին քաղաքական ծրագրային դրույթներին բնորոշ միօրինակության համապատկերում երբեմն մոտեցումների բարձրություն է նկատվում, հատկապես 2003 թ. ընտրություններում խորհրդարան չանցած կուսակցությունների ծրագրերում: Օրինակ՝ Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միություն կուսակցության ծրագրային դրույթներում եվրոպական ընկերակցությանը լիակատար ինտեգրումը համարվում է առաջնային Հայաստանի արտաքին քաղաքականության գերակայությունների շարքում: Ի տարբերություն մյուս քաղաքական կուսակցությունների, որոնք հանրապետության անկախության և անվտանգության պահպանման երաշխիքները տեսնում են հիմնականում հայ-առևտրական ռազմաքաղաքական դաշինքի մեջ՝ Ռուսաստան-Հայաստան-Իրան առանցքի շրջանակներում, քրիստոնեա-դեմոկրատները այդ նույնը կապում են եվրոպական քաղաքական միասնությանը անդամակցության հետ: Անվտանգության և զարգացման առաջնային երաշխիքների մեջ նշվում է նաև Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման և համագործակցության հաստատման խնդիրը: Ի դեպ, տարածաշրջանի երկրներում ժողովրդավարական ավանդույթների զարգացումը պատմահոգեբանական և քաղաքական կարևոր նախադրյալ է դիտվում նրանց միջև առկա խնդիրները լուծելու համար: Ուստի Հայաստանը պետք է աջակցի քաղաքակիրթ միջազգային հանրությանը իր հարևանների ինտեգրման գործին: Այս ենթատեքստից պետք է հասկանալ, որ Թուրքիայի և Ադրբեջանի եվրաինտեգրումը համապատասխանում է Հայաստանի շահերին, ուստի և սխալ է այդ գործընթացում խոչընդոտներ հարուցելու միտումներին աջակցելը: Ըստ ԶԴԱ-ի՝ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակի պահպանումը վտանգավոր է ազգային անվտանգության համար, և ընդունելի են բոլոր այն լուծումները, որոնք կերաշխավորեն Դարաբաղի հայերի անվտանգությունն ու ազատ զարգացման հնարավորությունները¹⁷:

Արտախորհրդարանական կուսակցություններից հարկ է նշել Հայաստանի նախկին արտգործնախարար Բաֆֆի Հովհաննիսյանի դաշինքի («Ժառանգություն» և «Ազգային պետություն» կուսակցություններ) ծրագրային դրույթները: 2003 թ. ծրագրում նշվում է, նոր աշխարհաքաղաքական իրողությունները հաշվի

¹⁶ Տե՛ս «Парламентские выборы. Армения 2003», էջ 72:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 122-123:

առնելով, երկարաժամկետ արտաքին քաղաքական ռազմավարության մշակման անհրաժեշտությունը՝ որպես այլընտրանք փոխարացման քաղաքականությանը: Ղարաբաղյան հարցում անթույլատրելի է համարվում տարածքային և այլ կարգի միակողմանի զիջումները¹⁸:

Ամփոփելով նշենք, որ մոտենում են հերթական նախագահական և խորհրդարանական ընտրությունները: Հայաստանը գտնվում է ծայրաստիճան վատ սոցիալ-տնտեսական կացության մեջ: Մեծ չափերի են հասնում աղքատությունն ու արտագաղթը: Անկախ Հայաստանի բոլոր իշխանություններն էլ տնտեսական դժվարությունների հաղթահարումը կապել են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից շրջափակման վերացման հետ, բայց քանի որ հակամարտությունը կարգավորված չէ, տնտեսական աղետի համար պատասխանատվությունը շարունակում է օդում կախված մնալ: Քաղաքականապես գրագետ հայաստանցի ընտրողը, հաջորդ տարի մոտենալով քվեատուփին, անշուշտ կցանկանա քվեարկել այն կուսակցության օգտին, որն առաջին հերթին ունի երկիրը հարևանների հետ պատերազմական կացությունից դուրս բերելու ծրագիր: Ցավոք, հայաստանյան կուսակցությունների հեղինակուկ արտաքին քաղաքական դրույթները դեռևս այդպիսի հնարավորության հույսեր չեն տալիս:

Г. М. КЕРЯН - *Внешняя политика и политические партии Республики Армения.* - В демократических странах партии играют важную роль в разработке и осуществлении внешнеполитического курса. Основная форма непосредственного воздействия партий на внешнюю политику — разработка программных документов и предвыборных платформ, которые в обязательном порядке содержат развернутые внешнеполитические разделы, определяющие общее направление внешнеполитического курса. Партии оказывают разноплановое воздействие на основные звенья внешнеполитического механизма - на правительство, министерство иностранных дел, глав дипломатических представительств за рубежом и т. д. Такие политические процессы происходят и в Армении, специализированные органы внешнеполитического механизма и здесь нередко приобретают партийную окраску. Наглядно прослеживается воздействие партий на функционирование парламента при осуществлении им внешнеполитических полномочий, особенно деятельности парламентской комиссии по иностранным делам.

Основные внешнеполитические установки политических партий Армении — установление и поддержание устойчивого мира, участие в региональных и иных системах безопасности, отношения с внешним миром на принципах взаимодействия и комплиментарности, интеграция в Европу, признание геноцида армян, решение карабахской проблемы путем мирных переговоров, тесное сотрудничество с Россией и США и т. д.

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 105-106: